КТО ТОЛЬКО ЗНАЛЪ ТЕВЯ, ТЫ КАЖДЫМЪ ВЫЛЪ ЛІОЕИМЪ,
А ТАМЪ, ТАМЪ ОЗАРЕНЪ ЧИСТЪИШИМЪ ВѢЧНЫМ СВЕТОМЪ,
БЛАЖЕНСТВУЕТЪ ДУШОИ, НО МЫ, МЫ ЗДѢСЬ СКОРЕИМЪ[1]

*Ծանոթ. Գրիգոր Եսայու Հայրապետյանը Մոսկվայի համալսարանի ուսանող էր: Մոսկվայի հայոց եկեղեցու գերեզմանատանն է թաղված Հայրապետյանների տոհմի ներկայացուցիչ գեներալ-մայոր Պողոս Հովհաննեսի Հայրապետյանի դուստր Վարվառան՝ իր հոր կողքին: Գեներալ Պողոս Հայրապետյանը մահացել է 1853 թ. 76 տարեկան հասակում: Այստեղ է հանգչում նաև մեծահարուստ ազնվական, Հյուսիսային Կովկասի բազմաթիվ կալվածների սեփականատեր Ավետ Գալստյանը (Կալուստով), որի մասին մի շարք հիշատակություններ կան ռուսական ցարերի հրովարտակներում[2]:*

## Դ. Նովոդևիչե մենաստան և գերեզմանոց

*Հանրահայտ և ընդարձակ այս գերեզմանոցում թաղված են նաև բազմաթիվ հայեր (գլխավոր ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյան և այլք), որոնց մահարձաններին և կոթողներին փորագրված են հայերեն և ռուսերեն մակագրություններ: Դրանք անխտիր 20-րդ դարի երկրորդ կեսի հիշատակագրություններ են, ուստի նպատակահարմար գտանք ընդօրինակել միայն երկուսը:*

*155.* НАРОДНЫЙ АРТИСТ СССР/ ЛАУРЕАТ ЛЕНИНСКОИ/ ПРЕМИИ РУБЕН/ НИКОЛАЕВИЧ/ СИМОНОВ/1899-1968.

*156.* ДОКТОР/ ВЛАДИМИР АЛЕКСАНДРОВИЧ/ ТЕР-АВЕТИСОВ/ 1876-1920/ СВЕТЛАНА ЖУКОВА/ АПРЕЛЬ-ИЮНЬ/1920.

## ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ

*Լազարյան ճեմարանի լայնածավալ շենքը գտնվում է Մոսկվայի կենտրոնում՝ Հայկական նրբանցքի վրա: Կառուցվել է 1815 թ. Լազարյան եղբայրների նյութական միջոցներով[3]: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հատուկ դեկրետով տրվել է Հայկական հանրապետության տնօրինությանը, թեև հետագա տարիներին ծառայել է այլ նպատակների համար (այստեղ էր զետեղված ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտը): Նորոգումից հետո ամբողջապես տրամադրվել է ՀՀ Ներկայացուցչությանը (այժմ ՀՀ դեսպանատանը), որը շենքի սրահներում կազմակերպել է հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան: Պատերին ոչ մի հիշատակագրություն չի պահպանվել: Շքամուտքի առջև միայն վեր է խոյանում մի հուշակոթող, որի վրա փորագրված են ճեմարանի հիմնադիր Լազարյան եղբայրների ու նրանց ժառանգների մասին հետևյալ արձանագրությունները.*

---

1 Տես Великий князь Николай Михайлович, Московский некрополь, Т. I, СПб, 1907, с. 50.

2 Московский некрополь, т. 2, СПб, 1908, с. 8.

3 Ж. Ананян, В. Хачатурян, Армянские общины России, Ереван, 1993, с. 28-մինչև 6 տող: